


պան մի կին ասել է. «Ոչ լեզու կուղենք, ոչ ազգ, այլ ճշմարիտ կրօնք»։ Հուսկ ուրեմն սրոշուել է. «Լեզուն հայերէն պէտք է ըլլայ»։

Յարգելով հանգերձ խղճի աղատութիւնը, ցաւելով պէտք է ասենք, որ այլադաւան հայերի մէջ լեզուի խընդիրը, որ ազգային գործօններից առաջինն է, վէճի առարկայ է դառնում. իսկ ազգային աւանդութիւններն ու սովորութիւնները, որ մի ժողովրդի յատկանիշներն են, ստանակոխ են լինում լուեւայն, անզգալի կերպով։



ՅՏԱՐ Ե Կ Ե Ղ Ե Յ Ի

ՌՌԻՍ ՊՐԱՒՈՍ. ԵԿԵՂԵՅԻ

Բացի դպրոցական, և այլ վարչական բարեկարգութեան խնդիրներից, այժմ՝ ուսս հասարակութիւնը շահագրգռուած է եկեղեցու վերաբերութեամբ երկու խնդրով էլ. առաջինը, տեղական պրաւասլաւ ժողով գումարելու խնդիր, երկրորդը, եւսիսկոպոսացուների պատրաստութեան, տարիքի և նրանց նշանակուելու խնդիրը։

Համառուտական եկեղ. ժողով

Церк. Вѣст. (№ 32) տեղական պրաւասլաւ ժողովը կարևոր է համարում եկեղեցու թուլացած ազգեցութիւնը ամրապնդելու համար, կարգաւորել մի քանի խնդիրներ, որ առաջ են եկած իբրև ժամանակի անխուսափելի բերմունք։ Լրագիրը ասում է, որ ժողով գումարելու հակառակ կարող են լինել նրանք, որոնք կը կամենային՝ որ եկեղեցին կորցնելով իւր բարոյական ազգեցութիւնը թուլանար և կազմալուծուէր. այդպէս կամեցողները եկեղեցու յայտնի հակառակորդներն են. և այդ բնական է. ժողով գումարելուն հակառակ են նաև եկեղեցական տնարժան գործիչները, նրանք վախենում են ժողովից, որպէս անաչտա գատաւորից. դրանք իրանց վախը չեն կարողա-

նում յայնպէս արտայայտել: Բայց որ եկեղեցական շրջանում ժողով գումարելու միտքը հրապարակով համարուէր յանցանք—այդ անհասկանալի է:

Որքան էլ ժողովի մասին լուրերը անհիմն յայտարարեն, որքան էլ աշխատեն մոռացութեան տալ ժողովի գաղափարը, նա անխուսափելիօրէն պէտք է երևան գայ ամենայն յամառութեամբ: Բարձրաստիճան եկեղեցականները, որոնք ցանկանում են եկեղեցու բարիքը, հակառակ չեն ժողովին: Լրագիրը անհրաժեշտ համարելով ժողովի գումարումն, միևնոյն ժամանակ ցոյց է տալիս, որ ժողովի սրտումները պէտք է չվերաբերուեն եկեղեցու ոգուն, այլ արտաքին գործունէութեանը:

Եպիսկոպոսների պատրաստութիւն

Գալով եկեղեցական վարչական մարդկանց կամ եպիսկոպոսացուների պատրաստութեան, նոյն լրագիրը (№ 31) անբաւարար է գտնում այժմ գործադրուող միջոցը, որով ոչ միայն կենդրոնին այլ և թեմերին անյայտ և անձանօթ մարդիկ նշանակում էին նոյն թեմերում եպիսկոպոս:

Սրբազնագոյն Սինոդը մտադրութիւն ունի եպիսկոպոսութեան յարմար համարուած անձանց հրաւիրել Ս. Պետերբուրգ և պահել այնտեղ մի ժամանակ՝ նրանց բարոյական և մտաւոր կարողութիւններին առ տեղեան ծանօթանալու համար. բայց այս միջոցը լրագիրը բաւարար չի համարում. նա ասում է, հրաւիրուածները արդէն գիտենալով, թէ ինչի համար են հրաւիրուած, կաշխատեն լաւ երևալ, հաճելի լինել, կապեր հաստատել, իսկ այնուհետև:

Ուղիղ միջոցը լրագիրը համարում է այն, ինչ որ գործադրուում էր եկեղեցում, նախկին դարերում. սակայն այս ընտրութիւնը պէտք է կատարուի այն անձի վերայ, որ իբրև տեղական գործիչ իւր բոլոր յատկութեամբ լաւ յայանի է ընտրողներին: Հեռաւոր, և միայն ի համբաւոյ յայանի անձանց ընտրութիւնը՝ սակաւ քացառութեամբ, հիասթափեցրել է ընտրողներին:

Եպիսկոպոսացուների վերաբերութեամբ մի հանգամանք ևս կարևոր է համարում Սրբազնագոյն Սինոդը, — նրանց հասակը: Եւ յիրաւի, այդ բանը առաջնակարգ նշանակութիւն ունի: Տարիների ընթացքում պաշտօնավարելով զանազան ասպարէզներում, մարդս ձեռք է բերում որոշ փորձառութիւն, պատրաստութիւն և պաշտօնին վայել ծանրաբարոյութիւն: Եպիսկոպոսի համար Պօղոս առաքեալն ասում է. (ա. Տիմոթ. գլ. Կ. 6.) «Մի մատաղատունկ, զի մի հպարտացեալ՝ ի դատաստան սատանայի անկցի. այլ պարտ է նմա վկայութիւն բարի յարտաքննոցն ունել: Եթէ եպիսկոպոսը մատաղատունկ պէտք է չլինի, պէտք է չլինի և զառամեալ, անկարող իւր հոգեւոր և վարչական պաշտօնները կառավարելու:

Վանքերի բարեկարգութիւն

Церк. Вѣст. № 33 առնելով Новое Время-ից գրում է. Սրբազնագոյն Սինոդը վանքերի բարեկարգութեան համար հետեւե սլ միջոցներն է մշակուել. 1, Այսուհետև միայն համակեցական վանքեր բանալ և նոյն համակեցութիւնը մըտցնել եղած վանքերի մէջ, ուր հնարաւոր է: 2, Միաբանների վերայ աշարւրջ հսկողութիւն և վանական կեանքի մէջ անփորձներին մշտապէս ղեկավարելու համար ծերունիներ կարգել: 3, Աշխատել ներմուծել վանքերում վանականների համար այնպիսի մարմնական աշխատանք, որը համապատասխանէր վանքի կարիքներին և միևնոյն ժամանակ հոգեւոր կրթութեանը ու գատարկութիւնից ու ծուլութիւնից խուսափելու միջոց դառնար: 4, Եկեղեցական պաշտամունքը կատարել սահմանուած կանոնով և երկկողմնութեամբ. ժամերգութեան ժամանակ գործածել հին երգեցողութիւնը. չթոյլատրել հոգեւոր երգերի խտրական ոճով երգեցողութիւնը: 5, Այն վանքերը, ուր կան բաւական թուով միաբաններ, չպահել վարձկան խմբագետներ և վարձկան խմբեր, բացառութիւն թոյլատրում է միայն միտրոպոլիտաների մշտական ընակավայրերի համար: 6, Հե-

տեւել, որ վանականները անխափան պարտաւոր լինեն ժամերգութեան յաճախել և ժամաւորներից առանձին տեղ բռնել: Սրբազնագոյն Սինոդի միւս կարգադրութիւնները վերաբերում են վանականների վարք ու բարքի թերութիւններին, որ առաջ են գալիս աշխարհականների հետ ունեցած յարաբերութիւններից: Որովհետեւ արեւցութիւնը—ուսս ժողովրդի այս գլխաւոր պատուհասը—է և վանքերի մեծ չարիքը, Սինոդը առաջադրում է պահանջել վանք նոր մտնողներից պարտաւորական զգաստութիւն, արգելում է վանական սեղանների վերայ ոգելից ըմպելիների գործածութիւնը, չի թոյլ տալիս ոչ միաբաններին և ոչ վանահայրերին խցելում ևս ոգելից ըմպելի պահել: առաջարկում է ծանօթացնել նրանց ոգելից ըմպելիների վնասակար հետեանքների հետ, և հետու պահել վանականներին պարապորդութիւնից՝ օգտակար աշխատանքների վարժեցնելով: Ս. Սինոդը արգելում է վանականներին ծխել, վնասակար է համարում վանականների երթեկուցութիւնը աշխարհականների տները և աշխարհականներին՝ վանականների խցելու: Յանցաւոր վանականներին մի վանքից միւսը չտեղափոխել, այլ աշխատել ուղղել իրանց տեղում, ուր կրօնաւորելու են մտել, հնար եղածին չափ խօսափել վանականներին: ձխատէր քահանայի պաշտօնակատար կարգելուց, նոյնպէս և կուսանաց վանքերում պաշտօն յանձնելուց, վանականներին նուէր հանգանակելու չուղարկել և այլն: Ի վերջոյ Ս. Սինոդը, ի նկատի ունենալով, որ աշխարհական կամ հոգևոր դատարանների վճռով վանքերը ոպաշխարելու ուղարկուած անձինք ցանկալի ազգեցութիւն չեն ունենում վանականների վերայ, յանձնում է թեմական առաջնորդների հոգածութեանը, իւրաքանչիւր թեմում այդպիսի անձանց համար յատկացնել մի մի վանք՝ սարքելով այնտեղ բժշկական, ուղղիչ և այլ հաստատութիւններ:

Ռուսասանի վանքերի թիւր. Кавказъ-ը (№ 204), դրում է. Սրբ. Սինոդի տեղեկութեան համեմատ Ռուսաստանում 812 վանք կայ, Դրանցից 421 արականների և

391-ը իգականների: կրօնաւորների և կրօնաւորութիւնների ընդհանուր թիւն է 68,770, այս թուի մէջ 16,498-ը կրօնաւորութիւն Սինոդը առաջադրել է առաջնորդներին միջոցներ ձեռք առնել կրօնաւորական կեանքը բարձրացնելու, և պարտաւորել վանքերին, որ ծառայեն եկեղեցուն և հայրենիքին:

Նախանիկոնեան աւետարան

— Օրլովի նահանգի Սևակ քաղաքում բանտի եկեղեցում գտնուել է նախանիկոնեան մի ձեռագիր աւետարան գրուած 1571 թ.: Աւետարանի սկզբում կայ հետևեալ յիշատակարանը.

«Այս աւետարանը գրեց Մարտին Իվանովիչը, երբ էր սարկաւագ Վիլենսկիի Վոսկրեսենսկիի քահանայ երմուրա ետիֆուիչի: Եթէ երբէք սխալներ արած լինեմ, ի սէր Աստուծոյ ազաչում եմ, չդատապարտէք: Գրեցի Վիլնէ քաղաքում, Քրիստոսի ծննդեան հազար հինգհարիւր եօթանասուն և մի թուին, մայիսի քսան և երեքին»:

(Церк. Вѣст. № 33.)

Կոնսիստորիաների բարեկարգութիւն.

Кавказ-ում (№ 194) կարգում ենք, որ ուսս Սրբազնագոյն Սինոդը այս օրերս պէտք է ուղարկի թեմական առաջնորդներին բացձրագոյն թոյլտուութեամբ հրաման կոնսիստորիաների գործավարութիւնը դիւրացնելու և թեթեւացնելու համար: Կոնսիստորիական գործավարութեան մէջ առանց էական փոփոխութիւն մտցնելու՝ նրա գործերից մի քանիսը, որոնք հովուական նշանակութիւն ունեն, օրինակ, պրաւօսլաւ եկեղեցուն միանալը, չհաս պատկենների թոյլտուութիւնը և այլն, յանձնել թեմական առաջնորդների եղական տնօրէնութեանը. նրանք (թեմական առաջնորդները) իրանց պատասխանները խնդրատուներին ուղարկում են իրանց անձնական գիււանի միջոցով և ոչ կոնսիստորիաների: Ընդարձակել կոնսիստորիաների իրաւասութեան սահմանը: Կոնսիստորիաներն իրանց լիակատար պատասխանատուութեամբ վարելու են ծննդական վկայականների տուչութեան, գումարներ ստանալու և ուղարկելու

և ուրիշ գործերը, Ընդարձակուժէ կոնսիստորիաների ատենագրւորներն իրաւասութեան սահմանը: Այսպէս, այն կոնսիստորիաներուժ, ուր գործավարութիւնը շատ մեծ է, առաջնորդները թող են տալիս ատենագրւորներին եղակահորէն կարգադրութիւն անել կոնսիստորիա մտած մի քանի թղթերի վերաբերութեամբ, առանց զեկուցանելու ատենին: Աւելի ճշուած է ատենագրւորի յարաբերութիւնը դէպի կոնսիստորեայի ատենանը:

Թեմերի վերաբնութեան բաժանմունքի փոփոխութիւն

Սրբ. Սինոդը փոփոխութեան է ենթարկել թեմերի վերաբնութեան բաժանմունքը: Յայժմ՝ այնտեղ գոյութիւն ունեցող վերաբննիշ ժամանակաւոր յանձնաժողովները դարձուած են մշանջենաւոր հաստատութիւն՝ զնելով նրանց վերայ պարտականութիւն քննելու կոնսիստորիաների, արականների և իգականների ուսումնարանների, մոմի թեմական գործարանների և Սինոդի միջոցներից բաց թողած շինարարական գումարների հաշիւները: Այդ յանձնաժողովների նախագահի և անդամների պաշտօնները դարձրած են վարձով: Ընդ նմին աւելի անկախութեան և ինքնուրոյնութեան համար նախագահն ու անդամները նշանակուելու և արձակուելու են Սրբ. Սինոդից և ոչ թեմ. առաջնորդներից: Կոնսիստորիաների գրամական հաշիւները պէտք է վերաբնուեն Սրբ. Սինոդի գրասենեակում, Սինոդի բոլոր այս որոշումները արդէն բարձրագոյն հաւանութիւն են գտել: Кавказъ № 200.

Հոգեւորականութեան ապահովութիւն.

Սրբ. Սինոդը վերջին ժամանակներս ուշադրութիւն է դարձրել հոգեւորականութեան նիւթականի անբաւարար և անորոշ լինելու վերայ:

Սրբ. Սինոդը նպատակ է դրել մօտիկ ժամանակներս պարզելու 1, ոռճկի սրպիսի քանակ կարող է համարուել ըստ ամենայնի բաւարար այժմեան կեանքի պայմաններում: 2, Տեղական ինչ միջոցներ կան, կամ կարող են.

ձեռք բերուել եկեղեցական սրբազնագործ պաշտօնեաներին ապահովելու, ի լրումն առ այս պետական դանձարանից օժանդակութեան սահմանուած կամ արտաքոյ այս օժանդակութեանս 3, Դեռ ինչքան պէտք կը լինի դանձարանից բաց թողնել օժանդակութիւն, ամբողջ հոգևորականութիւնը ապահովելու համար 4, Ինչպէս պէտք է հոգևորականութեան և ծխականների միջից հեռացնել թիւրիմացութիւնները, որ տեղի են ունենում եկեղեցու միաբաններին ապահովելու այժմեան եղանակով, և կարգաւորել փոխադարձ յարաբերութիւնները հովիւների և հօտի մէջ նիւթական շահերի պատճառով:

Այս խնդիրները բազմակողմանի կերպով ուսումնասիրելու համար, օրեր պրօկուրօր Ս. Մ. Լուկիանովի նախաձեռնութեամբ կազմուած է առանձին խորհուրդ, որին մասնակցում են Սրբ. Սինօդի այժմեան նախագահող բարձր սրբազան Ֆլավիան Սինօդի անդամ եպիսկոպոսները, օրեր պրօկուրօրի օգնական Ա. Մ. Բօդովիչը, անտեսական մասի գիրքեկտօր Ի. Ս. Դամանսկին և Ս. Սինօդի վերազննութեան կառավարիչ Դ. Ա. Վինօգրադովը: Խորհուրդը մօտիկ օրերս կըսկսի իւր զբաղմունքները, և մտադիր է մինչև նոյեմբեր վերջացնել իւր աշխատանքը, որովհետև նոյեմբերից Սինօդի նոր կազմ կը լինի:

ՅՈՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՅԻ.

Վասիկանի ձգումն օրոգոսն եկեղեցու հետ միութիւն հաստատելու

Մակեդոնիայի և Թրակիայի օրթոդօքս եկեղեցիները Օսմանեան կառավարութեան նոր հաստատած օրէնքով մեծ մասամբ պէտք է անցնեն թուական առաւելութիւն կազմող բողոքարներին, ուրեմն դուրս գալով յոյն տիեզերական պատրիարքի իրաւասութեան տակից պէտք է ենթարկուեն բողոքար էկզարխին, այս պատճառով Կ. Պօլսոյ յոյն պատրիարքարանը տաքնապի մէջ է և դէպքից օգուտ քաղելով հոսովէականները յարուցել են միութեան խընդիրը, այն է, որ յոյն եկեղեցին միանայ լատին եկեղեցու

հետ, և այս բանի համար մեծ բան չեն պահանջում, այլ միայն, որ յոյն եկեղեցին ընդունի պապի գերիշխանութիւնը, իսկ պապի կառավարութիւնը կաշխատի խնդրին ցանկալի ելք տալ:

Կընչանակէ, եթէ Հռովմը յաջողի, յոյն եկեղեցու հետ միութիւն հաստատել, այդ եկեղեցիներն էլ իւր իրաւասութեան տակ պէտք է առնի, ուրեմն յոյն եկեղեցին պէտք է կորցնի իւր անկախութիւնը, որ իրանից ուժացած եկեղեցիների հետ Հռովմայ պապի հպատակը դառնայ: Մի խօսքով, հեղնաբար ասում է Церк. Вѣст. (№ 32), յոյներին սպառնում է կատարեալ կորուստ, եթէ նրանք չհետեւեն իմաստուն խորհրդին — հրատարակելով միութիւն պապի հետ և լինել հոգի պաշտպանի — Հռովմայ պապի հովանաւորութեան տակ: Միութեան հրաւիրողները գործը հեշտացնում են հռչակելով, ա. որ յոյն և հռովմէական եկեղեցիների դաւանութիւնների մէջ տարբերութիւն համարեա չկայ, բ. պապական վարչութիւնը այնպէս բռնակալ չէ, ինչպէս կարծւում է, գ. որ Օսմանեան կառավարութիւնը հետեւելով «թուրքիան թուրքերի համար» սկզբունքին, պէտք է աշխատի ոչնչացնել բոլոր ազգայնական և կրօնական խտրութիւնները իւր հպատակների միջից, նրանց ի մի ձուլելով, այսպիսի հանգամանքում միայն Հռովմը կարող է փրկել հպատակ ազգերին իւր հետ միացնելով և իրան հպատակեցնելով: Церк. Вѣст.-ը ցոյց տալով ա. յոյն և լատին դաւանութիւնների այն մեծ տարբերութիւնը, որի պատճառով ահագին գրականութիւն է կազմուած դարերի ընթացքում, բ. որ Հռովմայ բռնակալութիւնը ակներև է Պաղեստինում և բոլոր այն երկրներում, ուր նա իշխում է հողիների վերայ, մեռցնելով ազգայնական ամեն զգացում, գ. որ եթէ թուրքերը կամենան իրանց հպատակներին ի մի ձուլել — Հռովմը չի կարող այդ բանի առաջը առնել, — եղրակացնում է. «Ոչ, լատինների մեքենայութիւնները անօգուտ են, և նրանց խորամանկ դիտաւորութիւնը այս անգամ չի կատարուի. յոյները առայժմ պրաւօսլաւիէի թշնամիների հետամտութիւններին պատասխանում են միայն արհամարհական լռութեամբ»:

ՅՈՅԻ ԲՈՂԱՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Церк. Вѣст. -ը (№ 30) մէջ է բերում՝ բողբար էկզարխ Յովսէփ I-ի կարծիքը յոյն պատրիարքարանի և բողբար էկզարխարանի միջև շարունակուող տարաձայնութիւնների առիթով: Լրագիրը ասում է:

Յովսէփ I էկզարխի կարծիքով եկեղեցիները խնդիրը իսկապէս բողբարական է, և ոչ այնքան յոյն ազգաբնակութիւնը կայ ի նկատի, որքան բողբար, և վերաբերում է պատրիարքական և էկզարխական բողբարների վէճին: Բողբարական էկզարխութեան մասին յայտնի ֆերմանի հրատարակութիւնից յետոյ, բողբար ազգաբնակութիւնը, անցաւ էկզարխութեան կողմը, և այժմ՝ միայն 180 հազար մարդ յոյն պատրիարքարանի և բողբար էկզարխարանի միջև տարաձայնութեան առիթ են ծառայում: Հետևաբար եկեղեցիները մասին խնդիրը ոչ այլ ինչ է, եթէ ոչ բողբարական հարցի շարունակութիւն, որի վճիռը սկսուած է գեռ Սըրբազնագոյն Գրիգոր VI-ի պատրիարքութեան օրով, երբ սուլթանական հրովարտակով բողբար էկզարխութիւն հաստատուեց: Յայտնի է, որ բողբարները երկար ժամանակ աշխատում էին եկեղեցական անկախութիւն ունենալու համար: Գրիգոր VI պատրիարքը կազմեց եկեղեցական այգպիսի անկախութեան մի ծրագիր, որով տիեզերական պատրիարքութեան 17 թեմերը, որոնց ազգաբնակութիւնը մեծ մասամբ բողբար են, համարուեցին բողբարական, և իրաւունք ստացան բողբար միտրոպոլիտներ ունենալ: Այգպիսի թեմերը, բացի երկուսից (տիեզերական պատրիարքի սեպհական թեմ և Նեփրոկոպիական) այժմ գտնուում են բողբար պետութեան սահմաններում: Բայց այգ ծրագիրը բողբարներին չգոհացրեց և այն ժամանակի մեծ վեղիր Ալի փաշան մի կէտ էլ աւելացրեց, որի համեմատ այնտեղ, ուր ազգաբնակութեան $\frac{2}{5}$ -ը բողբար են, նշանակուած է բողբար միտրոպոլիտ: Պատրիարքը չհամաձայնեց այգ բանին և կազմեց տեղական ժողով, որը բողբարներին հրատարակեց հերձուած: Սակայն հերձուածը ընդունելի չեղաւ ոչ բողբարներից և ոչ թուրքաց կառավարութիւնից:

Մօտիկ ժամանակներում թուրքաց իրաւանց և դաւանութեանց նախարարն էլ պարլամենտում յայտնեց, որ յոյների և բուլղարների միջև դաւանարանական ոչ մի տարբերութիւն չկայ: Վասն զի, հերձուած համարելու և հրատարակելու համար անհրաժեշտ էր տիեզերական ժողով գումարել և ոչ տեղական, որովհետև այս առիթով կազմուած տեղական ժողովի անդամները բացառապէս յոյն հոգևորականներ էին, որոնք, որպէս շահագրգռուած կողմ իրաւունք չունէին դատելու բուլղարներին և վճիռ հրատարակելու: Այդ տիեզերական ժողովի գործ է, որը և կարող է վճռել յոյների և բուլղարների միջի վէճը, նախապէս լսելով մէկին և միւսին: Մինչդեռ տեղական ժողովը չէ լսել բուլղարներին և չէ պահանջել նրանց ներկայացուցիչներին խնդրի մանրամասնութիւնների բացատրութիւնները:

Էկզարխութեան վերաբերութեամբ յետոյ հրատարակուած Ֆերմանը, շարունակել է սրբազան Յովսէփը, իւր ամբողջութեամբ չէ գործադրուել, գործադրուեց նրա միայն մի մասը, որ կազմել էր Գլխգոր VI պատրիարքը, և այդ մասը ի նկատի ունէր 17 թեմերը: Իսկ բուլղարները անդադար պահանջում էին, որ Ֆերմանը ամբողջովին գործադրուի: Եւ յայտնի միջոցներում նրանք կարողացան նոր բէրաթ ստանալ, հակառակ թուրք կառավարութեանը անբարեհաճ լինելուն: Բէրաթների թուականները զուգընթաց են այն խոշոր անցքերին, որոնք թուրք կառավարութեանը այս կամ այն դժուարութեան մէջ էին դնում: Այսպէս, կրետական ապստամբութեան ժամանակ և ռուս-թուրքական պատերազմի նախօրեակին բուլղարներին տրուեցին երկու բէրաթներ Սկօպիայի և Ալիսիդայի համար և յոյն տաճկական պատերազմի ժամանակ՝ երեք բէրաթներ, Մօնաստիրի, Ստրօմնիցայի և Դիվրայի համար: Այսպէս, այժմ բուլղարական էկզարխութիւնը ունի Տաճկաստանում ընդամենը 7 թեմ: Ճշմարիտ չէ, որ լրագրները վերջին ժամանակներս յայտնեցին, թէ էկզարխարանը խնդրել է թուրք կառավարութիւնից էլի չորս նոր բէրաթներ: Լուր կար, որ թուրքաց կառավարութիւնը կամենում է ինքնա-

բերաբար էկզարխութեանը չորս բէրաթ տալ, բայց սրբազան Յովսէփը կասկածում է: Ապագայում այդպիսի բէրաթներն ստացումն հնարաւոր է այն տեղերի համար, ուր բոլգար ազգաբնակիւթիւնը բազմաթիւ կըլինի: Վասն զի բոլգար ազգաբնակիւթիւնը ամբողջովին գեռ էկզարխարանի իրաւասութեան տակ չէ և այժմ էլ հետզհետէ բոլգարները էկզարխարանի իրաւասութեան տակ են մտնում: Վերջին տարիներս էկզարխութեան անցել են 400—500 գիւղեր: Անցումն ընդհատուեց այն ժամանակ, երբ Մակեդոնիայի կառավարութեան գլուխ անցաւ Հիլմի-փաշան: Նա status quo—նախկին դրութիւն—հրատարակեց և արգելեց գիւղացիներին փոխել հողեր իշխանութիւնը մնալով պատրիարքարանի էկզարխարանի իրաւասութեան տակ:

Սահմանադրութիւն հրատարակելուց յետոյ յոյն-բոլգարական հարցը նորից զարթեց և մինչև անգամ անցաւ պարլամենտի քննութեան, որին երանելի Յովսէփը համակից չէր: Նա թուրք կառավարութեանը թաղրիը ներկայացրեց, որով ապացուցանում էր, որ խնդիրը իւր պատմութիւնն ունի, և ապագայում պէտք է արժարժուի իւր բնական ընթացքին համեմատ: Բայց այս թաղրիը ուշադրութեան չառնուեց, և եկեղեցիների մասին օրէնքը արգէն հրատարակուեց և պատրիարքարանի համար բաւական ձեռնտու է երևում: Սակայն պատրիարքարանը ընդդէմ է այդ օրէնքին և ունի իւր իրաւունքը, ձգտելով ազատուել օրէնքից: Բայց երանելի Յովսէփը չի կարծում, որ պատրիարքարանը յաջողութիւն ունենայ: Եթէ օրէնքը փոխուի էլ, խնդրի էութիւնը դրանով չի փոխուի. բոլգարացին բոլգար կը մնայ և էկզարխարանը կընդունի, իսկ յոյնը՝ յոյն և կըմնայ պատրիարքարանի իշխանութեան տակ:

Յոյն պատրիարքարանի ջանքերը վիճելի ազգաբնակիւթիւնը իւր իշխանութեան տակ պահելու սրբազան Յովսէփը համարում է անհիմն և ժամանակի կորուստ: Բոլգարները ցանկանում են եկեղեցում բոլգարերէն ժամբարգութիւն լսել և ուրիշ ոչինչ: Յոյն պատրիարքարանի մաքառումն ոչինչ օգուտ չի բերիլ, այլ միայն երկու ժողովուրդներին միմեանցից պառակտում է:

Եթէ այս կռիւը վերջանայ, հնարաւոր կը լինի հաշտութիւնը յոյն պատրիարքարանի և բողոքար էկզարխարանի մէջ:

Էկզարխը ցանկանում է համաձայնութիւն ի հարկէ զուտ եկեղեցական տեսակէտով և ֆերմանների համեմատ, բողոքարական եկեղեցին պէտք է իւր ինքնուրոյն կառավարութիւնը պահպանի, բողոքար լեզուն պէտք է ազատօրէն փորձագրուի թէ եկեղեցիներում և թէ դպրօցներում, իւրաքանչիւր եկեղեցու իրաւասութեան սահմանները պէտք է որոշուեն, նոյնպէս և իւրաքանչիւր եկեղեցի պէտք է ունենայ իւր սրոշ հօտը. և վերջապէս նրանց մէջ այնպիսի յարաբերութիւն պէտք է հաստատել, որ ապագայում որ և է հակաճառութիւն չլինի: Եւ ընդհանրապէս եկեղեցիների մէջ համաձայնութիւնը անհրաժեշտ է, որքան նրանց շահերը համանման են շատ խնդիրներում, յատկապէս իրաւասութեան խնդրում: Այս տեսակէտից սրբազան Յովսէփը եկեղեցու համար բարեբաղդութիւն է համարում, որ Քրիստոսի մեծ եկեղեցու գլուխ է կանգնած Սրբազնագոյն Յովակիմ Գ. պատրիարքը, որի մեծահոգութեան և լայն հայեացքի վերայ զարմացած էր էկզարխը դեռ նրա առաջին պատրիարքութեան ժամանակ, երբ յարուցուեց բողոքարական եկեղեցու իրաւասութեան խնդիրը: Էկզարխը գուշակում է, որ մի գեղեցիկ օր համաձայնութիւնը կը կայանայ, որովհետև դրանով միայն կսպառուի յոյն բողոքարական հարցը: Ընդհանրապէս բողոքարներն երախտագիտութեամբ են համակուած դէպի յոյն եկեղեցին, որի զուակներն էին մի ժամանակ, տեսներով նրա բարիքը, նրանք երախտապարտ են զգում իրանց դէպի եկեղեցին և յոյն կուլտուրան, որով սնուած են և որի հետքերը մինչև այժմ էլ դեռ կան Բողոքարիայում:

Церк. Вѣст.-ը ցանկալի է համարում երկու եկեղեցիների հաշտութիւնը, բայց և գծուարին, ի նկատի ունենալով նրանց լարուած յարաբերութիւնը:

Յոյները առարկում են, որ 1, բողոքարական եկեղեցին սկզբնաւորուել է ոչ թէ սովորական կարգով, այլ ոչ-քրիստոսական:

տոնեայ թուրք պետութեան ֆերմաններով դրա համար էլ նրա գոյութիւնը ոչ միայն կանոնական չէ, այլ հակառակ քրիստոնէութեան և օրթոդոքսութեան. 2, էկզարխի առարկութիւնը՝ թէ բուլղարներէ հերձուած հրատարակուելը չեն ընդունել ոչ բուլղարները և ոչ թուրք կառավարութիւնը, յոյներէ կարծիքով համոզեցուցիչ չէ, որովհետև եկեղեցական կանոնով, ապացոյցները պէտք է լինեն եկեղեցական կանոնական և ոչ անձնական կամ բոլորովին օտարազգի. 3, Տեղական յոյն ժողովը, որ դատապարտել է բուլղարներին, ունէր կանոնական հիմք, որովհետև խընդիրը ծագել էր տեղական եկեղեցու սահմանում և ամենից առաջ՝ նոյն եկեղեցու իրաւասութեան ենթակայ էր Յայանի է, որ Գրիգոր VI պատրիարքը ցանկանում էր տիեզերական ժողով գումարել բուլղարներին դատելու համար, և նա յանցաւոր չէ, որ այդպիսի ժողով չկայացաւ. Վերջապէս տեղական ժողովի մասին յետոյ իրանց կարծիքը յայտնեցին արևելեան միւս եկեղեցիներն էլ, և նրանց ձայնը յօգուտ բուլղարների չէր: Ինչ վերաբերում է եկեղեցիների մէջ դաւանարանական տարաձայնութեան, ի հարկէ թուրք մինիստրի կարծիքը նշանակութիւն չունի, որովհետև նա բոլորովին անձեռնհաս է այդ խնդրում:

Յոյն ազգային եկեղ. ժողովի խախտումն

Եկեղեցիների վերաբերութեամբ մակեդոնացի յոյներէ և բուլղարների միջև ծագած վէճի առիթով Օսմանեան կառավարութիւնը մի օրէնք հրատարակեց, որով եկեղեցիները մնում են մեծամասնութեան, փոքրամասնութեան իրաւունք է տրուում նոր եկեղեցի կառուցանել, իսկ կառավարութիւնը խոստանում է նիւթական օգնութիւն հասցնել Յոյն պատրիարքարանը տժգոհ այս օրէնքից, և տեսնելով որ կառավարութեան իւր դիմումները ապարդիւն անցան, որոշեց ազգային ժողով գումարել, որը պէտք է բաղկանար Սինօդի 12 և քաղաքական ժողովի 8 անդամներից, գործի վերայ գտնւող 12 մետրապօլիտաններից, Պլոսոյ արքեպիսկոպոսութեան երկու ներկայացուցիչներից

Թեմական 87 ներկայացուցիչներին: Ժողովի բացումն նշանակուած էր սեպտեմբերի 1-ին, որը հրատարակում է հետեւեալ շրջաբերականը:

«Նրբ երկու տարի առաջ, ազատութեան, արդարութեան ու հաւատարութեան ազնիւ խորհրդանշին ներքեւ, բռնապետութիւնը ապալեցաւ ու Սահմանադրութիւնն հաստատուեցաւ, իրաւամբ յոյս ծնաւ թէ յառաջդիմութեան շրջան մը սկսած էր: Վարչական լաւ, անկեղծ ու արդար դրութիւն մը հիմնուած էր, և Վախճանութեան ժողովուրդները սյիտի եղբայրակցէին: Գժեխտաբար իրականութիւնը մեծ յուսախաբութիւն պատճառեց և երկիւղներ յառաջ եկան, որոնք, ինչպէս հիմա կերևի, անհիմն չեն, զի բրահանութիւնը ցոյց տուաւ թէ հաւատարութեան խոստումներն ո՛չ միայն նշանակութիւն չունին, այլ նոյն ինքն ազատութիւնը դործադրուեցաւ անպիտի կերպով, որ բռնապետութեան ժամանակի հարստահարութիւններէն աւելի գէշ եղաւ: Ազգային դիտակցութիւնն ու կրօնք մեծ վտանգի ներքեւ են, զի հակառակ սահմանադրական երաշխաւորութեանց ու պաշտօնական հաւաստիքներու թէ սյիտի յարգուին ձեռք բերուած իրաւունքներն ու սահմանադրական ազատութիւնները, Վարիչ անտեսանելի ձեռք մը նոր ռէժիմին բոլորովին հակառակ նպատակ մը կհետապնդէ, ուղեւոր ջնջել ամէն ազգային ու կրօնական գոյութիւն: Ասկէ ծնունդ կառնեն անսպառիժ կերպով մեզի և այլոց դէմ ի դործ դրուած քմահաճ բազմաթիւ արարքները: Կանոնաւոր կերպով կատարի հալածանք մը կմղուի մեր հասարակութեան ու անոր իրաւանց և առանձնաշնորհներուն դէմ: Հազիւ թէ ցաւալի քմահաճ դէպքի մը, հասարակութեան մը, կամ անհատի մը դէմ գործուած ապօրինութեան մը արձագանգը կանհետի, նոր ապօրէն դէպքեր կուգան յորդել մեր վիշտին բաժակը: Տեղ մը, դոր օրինակ, գինովի մը մէկ ապօրինութեան համար ամբողջ քաղաք մը կամ շրջահայրը կզրպարտուին իբր ապստամբ, ու պատիժներ կտրուին, բազմաթիւ անմեղներ ծանր պատիժներու կենթարկուին, նոյն իսկ եկեղեցիներ կը պղծուին, խորաններ կքանդուին, ու կը խուղարկուին գերեզմաններ, ուր նախնեաց մահկանացու մնացորդները կհանգչին: Ուրիշ տեղ մը՝ ծիծաղելի մասնութեան մը վրայ, քահանաներ ու երևելիներ երկար ատեն կբանտարկուին և դաւաճան կնկատուին, այլուր գէնքերը ժողովուրդ առթիւ ազատ սահմանադրական քաղաքացիներ մահու չափ կծեծուին ու կչարչարուին՝ ազատ սահմանադրական աէրութեան պաշտօնէից կողմէ: Քահանաներ ու եպիսկոպոսական փոխա-

նորոգներ ապօրէն կերպով կը ձեռքբախուին ու բանա կղբուին, առանց յարգուելու օրինական արամագրութիւնը՝ այսպիսի անձերու հարցաքննութեան ու բանտարկութեան մասին: Առաջարկական պաշտօնեաներ օրէնքը ռանակոխ կընեն ու քմահաճօրէն շարժելով՝ իրենց չվերաբերած գործերուն կմխլաման, և պաշտօնապէս ճանչուած ու Սահմանադրութեամբ հաստատուած մեր եկեղեցական ու դպրոցական առանձնաշնորհումները խնդիր կընեն: Քրիստոնեայ հասարակութեանց ու վանքերու վերաբերեալ անվիճելի ինչքեր խնդրոյ առարկայ կդառնան և իշխանութիւնք այլ և այլ պատրուակներով կըտեն թէ անոնք կպատկանին ուրիշներու: Ուրիշ տեղ մը, յոյն ժողովուրդին կազմած մեծամասնութիւնը նուազեցնելու համար, դուրսէն եկած իսլամ դաղթականներ կհաստատուին՝ քրիստոնեաներուն դէմ անիրաւութիւն գործելով, մինչ քրիստոնեայ դաղթականներու հաստատումը խտօրէն կարգիլուի: Քրիստոնէից խիղճին վրայ ալ ըռնութիւնք չեն պահօիր: Փոքր Ասիոյ քրիստոնեայք, Սթալրիսդ կոչուած, որ ամենամեծ վտանգներով պահած են իրենց նախկին հաւատքն ու կէս դարէ ի վեր քրիստոնեայ հոչակած են ինքզինքնին՝ այսօր կհարստահարուին և իշխանութեանց կողմէ չեն ճանչուիր իբր քրիստոնեայ, և հակառակ իրենց բողոքներուն, կարձանագրուին իբր իսլամ: Նոյնպէս Սպարթիայի և Տուրացոյցի քրիստոնեայք՝ մէկ քանի դարերէ ի վեր քրիստոնեայ ճանչուելուն հակառակ, այսօր անհնարին նեղութեանց կենթարկուին Քրիստոսի հաւատքին հաւատարիմ մնալ ուզելնուն համար: Ի կէլիէլի, իշխանութիւնք վերջերս ստիպեցին ռումանախօս Օթթոտըս ժողովուրդը, որ միշտ հաւատարիմ էր Օթթոտըս եկեղեցւոյն, փոխել իր եկեղեցական ու ազգային գիտակցութիւնը, ուրանալ դարաւոր աւանդութիւնները, անցնիլ ուրիշ հասարակութեան մը և եկեղեցւոյ ու դպրոցի մէջ ընդունիլ ամէն ժամանակ գործածուած յունարէնէն տարբեր լեզու մը: Հապա ի՞նչ ըսել այն ձգտումին, որով քրիստոնեաներ և մանաւանդ անչափահասներ շարունակ իսլամութեան կմղուին: Այսպիսի դէպքեր չէին կրնար ուշադրութենէն վրիպիլ եկեղեցական քարձր իշխանութեան, որ պիտի պաշտպանէ նուիրական աւանդները, և Պատրիարքարանը, հպատակելով իր վրայ ծանրացած պարտականութեան, դիմումներ կատարեց, կառավարութեան ուշադրութիւնն հրաւիրեց ու պահանջեց որ ռանձութիւնք և անարդարութիւնք դադրին և անցեալ տարի տուած երկար մաղպաթայով մը թուեց եղած անարդարութիւնները: Բայց ասիկա քանի մը չձառայեց և լող

խոստումներ եղան թէ մեր իրաւունքներն ու առանձաշնորհումները պիտի յարգուին: Ընդհակառակն չարիքը կաճի օր ըստ օրէ և վտանգը աւելի մեծ կերևայ այսօր: Այսօր մեր գոյրոցներուն դէմ անձադուրսիւն կըլլայ և զրոյցներ կան թէ կառավարութիւնը նոր պէրաթներ պիտի ապաւորուի և հերձուածողներուն, որոնց դէմ Եկեղեցւոյն կողմէ արձակուած վճիռն հերձուածի մասին՝ չի ճանչնար կառավարութիւնը, և չուզեր պաշտպանել Օրթոտոքս կարգ կանոնը: Ի լրումն այս ամէնուն, օրէնքի մը քուէարկմամբ ուղեցին բանարարել մեր առանձնաշնորհումները: Մակեդոնիոյ և Թրակիոյ մէջ, հերձուածող պուլհարներուն կողմէ խնդրոյ առարկայ եղած Եկեղեցիներու և գոյրոցներու օրէնքը, որ հապճեպ կերպով քուէարկուեցաւ Երեսօք. Ժողովին ու Մերակոյտին կողմէ ու վաւերացաւ կայսեր կողմէ, և որով անվիճելի ստացուածք մը կըլուի Յոյն Եկեղեցիէն, ահներև հարուած մէ մեր առանձնաշնորհումներուն դէմ: Արդարև, ասորքեր կրօնքի հետևորդ նախարար մը պաշտօնապէս ինքզինքին իրաւունք կուտայ կարծիք յայանելու վարդապետական ու եկեղեցական վէճերու վրայ ու գանձը կարգադրելու իր ուղած կերպովը: Մեր հասարակութիւնն իրաւամբ ըմբոստացաւ և ամէն կողմէ բողոքներ հասան: Ըստ սրում այս կացութիւնն ապօրէն է ու վտանգաւոր, և ըստ սրում զմեզ չըջապատող երկու Ժողովներով սոյառած էինք ամէն օրինաւոր միջոց, և ինկատ առնելով այն պատասխանատուութիւնը, զոր ունինք՝ մեր Եկեղեցւոյն ու հասարակութեան նախնական աւանդներուն պահպանումը մեզի յանձնողներուն հանդէպ, տեսնելով միանգամայն թէ Եկեղեցին կհալածուի, և պէտք է խորհրդածութիւն մը կատարուի այս գործոց վրայ, անհրաժեշտ դատեցինք Ազգ. Ժողով մը կազմել բոլոր թեմերուն ներկայացուցիչներէն, Ազգին ներկայացուցիչներուն հետ խորհրդակցելու և տալ այն որոշումները, զորս Աստուած պիտի ներշնչէ այս մեծ Ժողովին»:

Բիւզանդ.

Տաճկաստանի լրագրերը լրծօրէն քննադատում են այս շրջաբերականը և գանձում են խիստ:

Մշակի Կ. Պօլսոյ թղթակիցը (№ 199) հաղորդում է որ Սեպտեմբերի 1-ին յոյն պատրիարքարանում նշանակուած ազգային Ժողովը տեղի չունեցաւ. յայանի և գաղտնի ուստիկաններ ու ձիււոր ժանտարմներ շրջապատել էին

պատրիարքարանը և մի քանի էլ ձերբակալութիւններ եղան: Յոյն պատրիարքը բողոք է ներկայացրել արդարադատութեան նախարարին. բողոքի գլխաւոր կէտերն են.

1) Պատրիարքարանը ասիէ առաջ՝ ժէ., ժԸ. և ժԹ դարերուն մէջ գումարած է ազդային ժողովներ:

2) Սահմանադրութեան հռչակումէն ի վեր՝ գումարումի ազատութիւնը տրուած է բոլոր օսմանցիներուն:

3) Իրաւունք մը, որ բոլոր օսմանցիներուն տրուած է, չի կրնար զլացուիլ Յոյն-օրթոդոքսներուն:

4) Սահմանադրութեան արամադրած գումարումի ազատութիւնը տրուած է Թիւրքիոյ շատ մը հասարակութեանց:

5) Գումարուելու համար արտօնութիւն ստանալու պէտք չկայ. կը բաւէ միայն տեղիկութիւն տալ կառավարութեան, ինչ որ արդէն ըրած է պատրիարքարանը:

6) Ոչ մէկ պաշտօն կայ վախճանալու, որ հանրային անդորրութիւնը կը խանդարուի:

7) Ազգային ժողովի գումարման ծրագրին մէջ ըսուած չէ, թէ միջոցներ ձեռք պիտի առնուին եկեղեցիներու օրէնքին գործադրութեանը դէմ:

Արդարադատութեան մինիստրը յայտարարած է, թէ անօգուտ է թղթակցիլ պատրիարքարանի հետ: Լանքային ապահովութեան տեսչութիւնը պէտք եղած հրահանգները ստացած է պատրիարքարանի պատրաստութեանց մասին: Ու այդ կերպով զդացուցած է. թէ պիտի արգիլուին, նոյն խնդրանի ուժով, ազգային ժողով գումարելու բոլոր միջոցները:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

ԱՆԳՂԻԱՅԻ ԿԱՐՈՒԿՆԵՐԻ ԱԳՂԱՅԻՆ ԿՈՆԳՐԵՍ

Церк. Вѣст. (№ 31.)

Այս տարի յուլիսի 29 — օգոստոսի 2-ին. ա. գումարուել է Անգլիայի կաթոլիկների ազգային կոնգրեսը: Նախաձեռնողն էր Վեստմինիստրի արքեպիսկոպոս Բունը: Կոնգրեսը կազմուած էր գլխաւորապէս անգլիայի կաթոլիկական հաստատութիւնների ներկայացուցիչներից: Մասնակցում էին ընդ ամենը 27 միութիւններ, որոնք միաժամանակ կազմում էին իրանց նիստերը, Երեք ընդհանուր,

ժողովրդական նիստեր տեղի ունեցան, որոնցից մէկը յատկապէս կանանց համար:

Կոնգրէսի նախագահ արքեպիսկոպոսը ժողովի բացման ճառում յայտնեց այն յաջողութիւնը, որ 50 տարուայ մէջ կաթոլիկութիւնը ունեցել է: 1850 թուին Անգլիայում կար 587 կաթոլիկ եկեղեցի, 99 կաթոլիկ դպրոց 11,000 աշակերտներով և 788 կաթոլիկ քահանաներ, այժմ կան 1760 եկեղեցիներ, 3687 քահանաներ և 1064 դպրոց 339,000 աշակերտներով: Արքեպիսկոպոսը միանգամայն յայտնեց, որ երկրում ոչ մի կրօնական հաստատութիւն այնքան մօտիկ չէ գտնուում աղքատ և կարօտ դասակարգին, որքան կաթոլիկ եկեղեցին: Եւ իբրև եզրակացութիւն, կոչ արեց անգլիական կաթոլիկներին որ քարոզչական գործին աւելի եռանդով կպչեն, մանաւանդ Հնդկաստանում: Կոնգրէսը երկու որոշումն արեց, առաջինով յայտնում է անկեղծ անձնուիրութիւն առաքելական աթոռին և պատրաստականութիւն՝ կատարելու նրա բոլոր ցանկութիւնները, իսկ միւսով յայտնում է բողոք կաթոլիկների իրաւունքների սահմանափակութեան դէմ. համակրութեամբ ընդունուեց կաթոլիկ եկեղեցին թշնամիներից պաշտպանելու միջազգային կաթոլիկական միութիւն հաստատելու առաջարկութիւնը: Կոնգրէսի առիթով Լիդսում կազմուած էր գեղարուեստական և հնախօսական ցուցահանդէս:

Կաթոլիկական շրջաններում ընդհանրապէս յաջող է համարուում համակաթոլիկական ժողովի այս առաջին փորձը:

Անգլիական քաղաւորի երգման ձևի բարեփոխութիւն

— Այս կոնգրէսին զուգահեռաբար անգլիական պարլամենտում անցաւ օրինագիծը՝ թագաւորի գահ բարձրանալիս երգման փոփոխութեան վերաբերութեամբ: Երգման նախկին ձևի մէջ կային կաթոլիկ եկեղեցու վարդապետութեան մի քանի կէտերի վերաբերութեամբ անհամոզ արտայայտութիւններ: Այս փոփոխութիւնը կաթոլիկների համար խոշոր յաջողութիւն է համարուում: Ասկվիտը օրինագծի երկրորդ ընթերցման ժամանակ երգման ձևի մէջ փոխանակ. «Ես... հաւատարիմ անգամա բողոքական բա-

ընտրագուած եկեղեցու, որը օրէնքով սահմանուած է Անգլիայում, դրեց աւելի ընդհանուր արտայայտութիւն, այն է «Ես . . . հաւատարիմ բողոքականս»։ Այս փոփոխութեամբ նոր ձեւը ընդունուեց թէ համայնքների և թէ յօդուների պալատում։ Կաթոլիկներն էլ մնացին դռն։

Կաթոլիկութեան յառաջիկայութիւնը Երասիայում

Պրանսիայում անբարեացակամութիւնը դէպի կաթոլիկութիւնը մեղմանում է։ Պարլամենտի նորընտիր անդամների մի նկատելի թիւ ընտրուած են խաղաղասիրականներ։ Ինքն նախագահ մինիստրը պատրաստ է մինչև մի սրտ աւտիճան զիջող լինել։ Լուսաւորութեան նախարարը չլիարեականով յայտնել է, որ ժողովրդական դրպրոցների դասագրքերի ցուցակը կուղարկուի ծնողներին, որոնք իրաւունք ունեն իրանց դիտողութիւնը յայտնել դասագրքերի վերաբերութեամբ։ — Թէև Պրանսիայում այսպէս, բայց Սպանիայում դեռ շարունակուում է բուռն մարտումն պետութեան ու կղերականների մէջ։

ԱՉՍՏ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ

Օգոստոսի 6—10 ն. ա. Բերլինում գումարուել է «Ազատ քրիստոնէութեան և կրօնական յառաջագիւմութեան Ե. համաշխարհային կոնգրէսը»։ Կոնգրէսին մասնակցել են զանազան ազգութիւններից մօտ 2000 հոգի, 40 կրօնական համայնքներից, որոնց մէջ կային հրէաներ, մահմետականներ, բրահմանականներ, բուդդայականներ, քսան զանազան ազգութիւններից, ամենից աւելի Անգլիայից և Ամերիկայից։ «Զանազանակրօն ամբողջ զանգուածը, առում է Церк. Вѣст., (№ 33) մի համոզման յանգեց. թէ կրօնքը որպէս միջոց, որով մարդս նուիրում է Աստուծուն, որպէսզի նրանով ապրի և նրանով դորձի, պէտք է անպայման ազատ լինի, պարտաւորական դաւանաբանական ոչ մի սահմանափակութիւն տեղի պէտք է չունենայ։ Կոնգրէսը կրօնական ազատութեան օգտին մի ցոյց էր։ Շատ ճառեր

են խօսուել. աչքի է ընկել Ա. Հառնակի ճառը իւր շափաւոր սւղգութեամբ նա աւետարանը երկու է բաժանել—Յիսուսի աւետարան կամ Յիսուսի սեպհական քարոզներ Աստուծոյ արքայութեան մասին և Յիսուսի մասին աւետարան կամ քարոզներ Յիսուսի մասին, թէ ինչպէս երեսց երկրի վերայ, մարդկանց համար մեռաւ և իբրև Աստուծոյ Որդի յարութիւն առաւ: Հառնակ իւր ապացոյցները բերում էր ոչ թէ Պօղոս առաքելից, այլ Գործք առաքելոցի՝ առաքելների առաջին քարոզից՝ Պրօֆ. Փ. Զօդէնը իւր բանախօսութեան մէջ ապացուցանում էր, որ նոր կտակարանի քննական-ուսումնասիրութիւնը ոչ թէ չի թուլացնում հաւատը, այլ դորացնում է Գունկելը խօսել է կրօնների պատմութեան մասին հին կտակարանի գիտութեան համար:

Այս բազմազան կրօնական համայնքներից մինչև անգամ անկրօններից կազմած կօնգրէսում շօշափուել են և այնպիսի խնդիրներ, որ կրօնքի հետ քիչ առնչութիւն ունեն:

Ուղղափառական բողոքականները վերին աստիճանի դժկամակութեամբ վերաբերուեցին դէպի այս կօնգրէսը, որ առաջին անգամն էր գումարում Գերմանիայում, և բազկացած էր թունդ ձախակողմեաններից, հրէաներից, կռապաշտներից և մինչև անգամ անկրօններից:

Պրուսիայի լուտերականների դիմադիր խորհուրդը, որ կոչում է «Օգոստոսեան կոնֆերինցիա» կոչ է արել հաւատարիմ լուտերականներին, ցոյց տալով կօնգրէսի ծագումն ու բազկացութիւնը, անուանել է այդ ժողովը հաւատուրացների և քրիստոնէութեան անպայման—միութիւնը հերքողների ժողով, որ անօրինակ յարձակումն է գործել և վիրաւորել է ոչ միայն աւետարանականներին, այլ և նրանց բոլորին, որոնք կամենում են քրիստոնեայ լինել, ուստի հրաւիրում է հին աւետարանականներին վերկենալ վկայելու երբեակ և մի Աստուծով, Ս. Գրքի աւետարանի և բարենորոգութեան (րեֆորմացիա) համար, և մասնակցել այն ժողովին, որ գումարուելու է օգոստոսի 31-ին:

Այդ կոնֆերենցիայի համար յատուկ բեֆերատներ կունենան պրոֆ. Գրիւտցմախերը «Եռանձնեայ Աստուածը մեր Աստուածն է» և պրոֆ. Վիլկէն՝ «Հին կտակարանի նշանակութիւնը քրիստոնէական հաւատի համար» բնարաններով:



Յոյն աւելելի Հին-եկեղեցական աստուածաբանական գիտութիւնքիւր ծաղկման երջանում (IV-V դր.). նրա զիւաւոր ուղղութիւնները եւ բնորոշ յատկութիւնները:

(Շարունակութիւն)

II.

Եկեղեցական կեանքի նոր պայմանների ազդեցութիւնը աստուածաբանական ուղղութիւնների փոխադարձ յարաբերութեան վերայ:—Նոր Ազէքսանդրիայի դպրոցը. Ս. Ազէքսանդրի. Գիղիմոսի, Վապարագովկիայի հայրերի. Ամթիլքէսի. Ապոզինարի. Ս. Կիրիլո Ազէքսանդրացու եւ Եւսեբիոս Կեսարացու աստուածաբանութեան բնաւորութիւնը:—Փոփոխութիւններ Ազէքսանդրիայի մեկնարանութեան մէջ: Անտիոքի դպրոցը. նրա պատմութեան շրջանները եւ նրա գործիչների աստուածաբանական գործունէութեան բնաւորութիւնը:—Փորթ-Ասիայի աստուածաբանութիւնը Գրդգարում. Ս. Կիրիլո Երուսաղէմացին:—Մարկեղոս Անկիւրիացին.—Ս. Եպիփան Կիպրացին.

Գրդգարի առաջին քառորդին մենք մտնում ենք նոր շրջանի՝ հին եկեղեցական աստուածաբանութեան ծաղկման ժամանակի մէջ. եկեղեցւոյ արտաքին զրուծեան հաստատութիւնը նրան կատարեալ հնարաւորութիւն տուեց ազատ և բազմակողմանի ծաղկման, իսկ հերետիկոսները դէմ մղած կռիւները—հարուստ նիւթ տուին իւր աշխատանքի համար: Հանդէս եկան եկեղեցւոյ ուսուցիչներին նոր սերունդներ, որոնք ճոխացած էին իրենց նախորդներին գործունէութեան փորձերով: Այս շրջանի առանձնայատուկութիւնը պէտք է ընդու-